<<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ
ԹԱ և ՈԿ քաղաքականություն

<<Հայաէրոնավիգացիա>> ՓԲ Ընկերությունը, ի դեմս ընկերության Գլխավոր տնօրենի և բարձրաստիճան ղեկավարության, Ընկերության զարգացման և մատուցվող ծառայությունների բարձրագույն նպատակ է սահմանում անվտանգ և հաճախորդների պահանջների բավարարմանն ուղղված որակյալ աէրոնավիգացիոն ծառայությունների, մասնավորապես՝ Օդային Երթևեկության Կազմակերպման (ՕԵԿզ) (ATM), Կապի/Նավիգացիայի/Դիտարկման (CNS) և Աէրոնավիգացիոն Տեղեկատվական Ծառայությունների (AIS) ապահովումը՝ միջազգային և ազգային չափանիշների համապատասխանության, ռիսկերի կառավարման, կենսական ցիկլի գործընթացների սահմանման, համակարգման և կառավարման միջոցով: Այս նպատակին հասնելու համար ընկերությունը ձգտում է՝

- Որպես բարձրագույն առաջնահերթություն՝ ապահովել Թռիչքների Անվտանգության, Որակի և Ավիացիոն Անվտանգության Կառավարման համակարգերի բնականոն և անխափան աշխատանքը տրամադրելով անհրաժեշտ միջոցներ անվտանգության մակարդակի պահպանման և շարունակական բարելավման համար,
- Աջակցել անվտանգ, արդյունավետ ու արագընթաց օդային փոխադրումների հոսքերին՝ ապահովելով և զարգացնելով թողունակության օպտիմալ մակարդակ՝ անվտանգ ու որակյալ ծառայությունների ապահովման համար,
- Սահմանել աէրոնավիգացիոն սպասարկման համար անհրաժեշտ բոլոր կենսական գործընթացները, դրանց մուտքերն ու ելքերը,
- Ձեռնարկել համապատասխան քայլեր ՀՀ օդային տարածքի ծառայություններից օգտվողների պահանջները հնարավորինս հստակ պարզելու, սահմանելու և առավելագույնս բավարարելու համար, ապահովելով տրամադրվող ծառայությունների շարունակական բարելավումը,
- Ապահովել օդային տարածքի բոլոր օգտագործողների համար մշտապես թարմացվող տեղեկատվության և միջազգային չափանիշներին համապատասխան աէրոնավիգացիոն ծառայության մատուցումը,
- Համագործակցել ոլորտի միջազգային և ազգային կազմակերպությունների հետ՝ ծառայությունների անվտանգության և որակի բարձր բնութագրերի պահպանման և բարելավման նպատակով,
- Ապահովել անձնակազմի արհեստավարժության բարձր մակարդակ, իրազեկության և գիտելիքների համապատասխան պահանջներ, դրանք բարձրացնելու համապատասխան մասնագիտական դասընթացներ, ինչպես նաև կադրերի պահուստայնության անհրաժեշտ մակարդակ,
- Ապահովել միջազգային չափանիշներին համապատասխան նորագույն տեխնիկական համակարգերի ներդրում, շահագործում և կատարելագործում, ինչպես նաև Օդային երթևեկության կառավարման համապատասխան գործընթացների սահմանում, փաստաթղթավորում և կառավարում,
- Սահմանել, պահպանել և բարելավել ընկերության անվտանգության կուլտուրան, ապահովել արդյունավետ և պարզ ներքին հաղորդակցություն ու ընկերության ընդհանուր նպատակներին ուղղված կորպորատիվ քաղաքականություն,
- Ապահովել, որ անձնակազմի յուրաքանչյուր անդամ իր գործունեության շրջանակներում գործի համաձայն սահմանված կանոնակարգերի և կրի պատասխանատվություն իր կատարած աշխատանքի համար,
- Հստակ սահմանել կազմակերպության կոնտեքստը՝ հաշվի առնելով ներքին և արտաքին բոլոր շահագրգիռ կողմերի պահանջները, դրանց ազդեցությունը ընկերության գործունեության վրա՝ ռիսկերի կառավարման և արդարացված հնարավորությունների օգտագործման տեսանկյունից,
- Կառավարել այն բոլոր ներքին և արտաքին գործընթացները, որոնք կարող են խաթարել ընկերության անվտանգության և որակի համակարգերի աշխատանքը, շարունակաբար գնահատել սեփական անվտանգության/որակի համակարգերը, ապահովել անմիջական և կանխարգելիչ մոտեցումներ ու արդարացված ձևով կիրառել ռիսկերի մեղմման ուղղիչ/կանխարգելիչ միջոցառումներ,
- Մշտապես վերլուծել նոր հնարավորությունների կիրառման նպատակահարմարությունը և ռիսկայնությունը,
- Ապահովել ավիացիոն անվտանգության ազգային կանոնակարգերի պահանջների համապատասխանությունը ինչպես պահպանության այնպես էլ կիբեռ անվտանգության տեսանկյունից,
- Առնվազն 2 տարին մեկ կամ ըստ անհրաժեշտության վերանայել Թռիչքների Անվտանգության, Որակի և Ավիացիոն Անվտանգության քաղաքականությունը՝ ապահովելով նրա արդիականությունն ու համապատասխանությունը ընկերության որդեգրած ռազմավարությանը և միջազգային ու ազգային փոփոխվող պահանջներին,
- Ապահովել հոգնածության ռիսկերի արդյունավետ կառավարումը և անհրաժեշտության դեպքում դրանց մեղմման համար ձեռք առնել կանխարգելիչ գործողություններ:

<<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ
Գլխավոր Տնօրեն

Ա. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Անձնակազմի ներկայացուցիչ (ներ)
Արհմիության նախագահ (ներ)

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ